

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊԻ ՆՈՐԱՎԷՊԵՐԸ

Էսսեան սանուց միութեան երկրորդ Գրական ասուլիսը որ նուիրուած էր Գրիգոր Զօհրապի նորավէպերուն վերլուծութեան, տեղի ունեցաւ 17 մարտ 1913, կիրակի, Բերայի Էսսեան վարժարանի սրահին մէջ:

Նախագահ Դուրեան Սրբազանի բացակայութեան հետեւանքով, հաւաքոյթին նախագահեց Պ. ՄԵԼՔՈՆ ԿԻՒՐՃԵԱՆ:

Յաջորդաբար խօսք առին Պ. Պ. Յ. Ճ. ՄԻՐՈՒՆԻ՝ որ համառոտ գիծերու մէջ ներկայացուց Զօհրապի կեանքը եւ գրական գործունեութիւնը, ՇԱԽԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ՝ որ առաւելապէս ծանրացաւ Զօհրապի գրական գործունեութեան բացասական կողմերուն վրայ, ՎԱՀԱՆ ԹԵՔԷԵԱՆ՝ որ ներկայացուց Զօհրապը իբր նորավիպագիր եւ անոր դերը թրքահայ գրական շարժման մէջ, ՏԻԿ. ԶԱՊԷԼ ԱՍԱՏՈՒՐ՝ որ խօսեցաւ Զօհրապի հերոսուհիներուն վրայ, ԳՐԻԳՈՐ ՄԱԼԽԱՄ՝ որ պտոյտ մը ըրաւ Զօհրապի գործերուն մէջ, եւ Գ. ԽԱԺԱԿ՝ որ Զօհրապը ներկայացուց իբր իր միջավայրին արտայայտիչը: